

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԺՈՂՈՎՐ

Պովկասեան ցուցահանդէսի ժամանակ կազմակերպուած բազմաթիւ ժողովների հետաքրքիրներից մէկը պէտք է համարել տնայնագործութեան ասպարէզում գործողների ժողովը, Պէտք է աւելացնել նաեւ, որ սա առաջինն էր ոչ թէ Կովկասում, այլ, եթէ չենք սխալուում, և Ռուսաստանում, չհաշուելով այն ժողովները, որ կազմակերպում են զեմստովոները: Տնայնագործութիւնը գիւղացու տարեկան մուտքի $\frac{1}{2}$ - $\frac{1}{3}$, մասն է տալիս, այնպէս որ այդ ճիւղը, իբր մի նեցուկ գիւղացու համար, չի կարելի անտես առնել, դրա համար կառավարութիւնը դեռ 70-ական թուականներում աւանձին ուշադրութիւն դարձրեց, կազմելով ֆինանսների մինիստրութեան կից մի առանձին «Տնայնագործական ջանձնաժողով», որի նպատակը պէտք է լինէր. 1) ուսումնասիրել տնայնագործութեան վիճակը Ռուսաստանում 2) դրա համեմատ նրան օգնելու ծրագիր մշակել 3) բաց թնել թանդարաններ, արհեստանոցներ և կազմել ու հրատարակել մատչելի գրքեր զանազան արհեստների վերաբերեալ: Ի հարկ է, միմիայն կառավարութեան դժուար էր այդ իրադործել, հարկաւոր էր հասարակութեան աջակցութիւնը, ուստի և շուտով այդ ասպարէզում սկսան գործել զեմստովոները, որոնք աւելի մօտ լինելով ժողովրդին, կարող էին հեշտութեամբ ուսումնասիրել և օգնել նրանց: Այժմ զեմստովոներն իւրաքանչիւր տարի ծախսում են 300000 ռ. աւելի գումար, Ի հարկէ համեմատելով լայնածաւալ երկրի հետ՝ դա մի մեծ գումար չէ, բայց եթէ ի նկատի ունենանք, որ այդ գումարը, եթէ ոչ այն չափով ծախսուում էր տասնեակ տարիների ընթացքում, այն ժամանակ կարելի է համոզուել, որ նա ապարդիւն չի կորչում, և ներկայումս զեմստովոները մեծ օգուտ են տալիս տնայնագործներին իրենց գործունէութեամբ:

Բարձրագոյն հրամանով 1888 թ. տնայնագործական ջանձնաժողովը անցաւ երկրագործութեան մինիստրութեան և մինչև այժմ գտնուում է այդ մինիստրութեան կից: Կովկասում մինչև 1898 թ. չկար ոչ մի կազմակերպութիւն, այդ թուին երկրագործութեան մինիստրը դիմեց իւր Կովկասի լիազօրին, որ կազմի մի ջանձնաժողով, զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներից, տնայնագործութիւնն ուսումնասիրելու համար: Այդ ջանձնաժողովը ունի մի գործաւոր, երեք ուսումնասիրող և մի հում նիւթերը մշակող ստատիստիկ, դրանց թրււում կա մի մասնագէտ քիմիկոս, որ բացառապէս պէտք է ուսում-

Հասիրի ժողովրդի գործածած ներկերը: Գտնանք մտադրութիւն կաշ հրաւիրելու մի մասնագէտ նկարիչ, որ ժողովրդի մնացած հին նկարներինց մի ալբոմ կազմի, բացի դրանից կոմիտետի ձեռք բերած հնագույն գույքերի ալբոմից մեծացնելով նկարները ցրուելու են ժողովրդի մէջ, որպէս զի հին նկարները վերականգնին, առաջի փոքր ալբոմում է, մօտիկ ապակայում լոյս կը տեսնի կոմիտետի լանձնարարութեամբ ուսումնասիրած Ղուբայի գաւառը:

Խօսելով տնայնագործների օգնելու խնդրի մասին, հարց է ծագում, թէ՛ ո՞ր աստիճանի նպատակադրմար է այդ գործի վրայ փող ծախսել: Այդ հարցը ինքնըստինքեան աւելորդ է, բայց կան տէորիտիկներ, որոնք ոգևորուած կապիտալիզմի չաղթական քայլերով, տեւորդ են համարում այդ տեսակ օգնութիւնը: Իրականութիւնն ու փորձը ցոյց են տալիս, որ օգնութիւնը ցանկալի է և ունենում է դրական հետեւանքներ. մանաւանդ պէտք է ի նկատի ունենանք 1) տրնայնագործութիւնը իւր մէջ պարունակում է և այնպիսի ճիւղեր, որոնք պահանջում են աւելի անհատական աշխատանք. հետեւապէս դժուար են ենթարկուած մեքենայական արդիւնաբերութեան, 2) կան ճիւղեր, որոնք թէպէտ դաշնել են և մեքենայական արդիւնաբերութիւն՝ բայց չեն տուել և չեն կարող տալ այնպիսի որակութեամբ արդիւնք, ինչպիսի են ձեռագործները և դրա համար վերջիններս գերադասուած են, գուցէ ասպակայում այդ փոխուի: Բայց ներկայումս այսպիսի երկիրներ, ինչպիսի են Օնգլիան, Մմերիկան, Ֆրանսիան, Գերմանիան և այլն, տասնեակ միլիոնների ձեռագործ գորգեր են գործածում, որոնց մի նշանաւոր մասը մեր Կովկասն է արդիւնաբերում: 3) տնայնագործութեան նպատակն է զիւղացու տարեկան 6—8 ամիսը որբան կարելի է լաւ շահեցնել, ի հարկէ այն երկիրներում, որտեղ զարգացած է գործարանական արդիւնաբերութիւնը և նրա գուլգրնթաց գիւղատնտեսութիւնը, զիւղացին ձմեռը իրեն համար գտնում է աշխատանք. օր. անասնադահութիւնը, թռչնապահութիւնը, կաթնատնտեսութիւնը նրան տալիս են ամբողջ տարուայ գործ և արդիւնք: Բացի դրանից, նա երկրից համեմատաբար աւելի շատ է ստանում, քան մեր երկրացիք, որտեղ գիւղատնտեսութիւնը նահապետական դրութեան մէջ է. դարդ է ուրեմն, որ այդ երկիրներում այն պիտի տնայնագործներ՝ ինչպիսի են Ռուսաստանի տնայնագործները, չեն կարող պատահել:

Հէնց այդ տեսակէտներից անհրաժեշտ է օգնել և բարձրացնել տնայնագործութիւնը Ռուսաստանը, որի բնակիչների մեծ մասը երկրագործութեամբ է պարապում, որտեղ գործարանական արդիւնաբերութիւնը լայն ծաւալ չի ստացել և որտեղ գիւղատնտեսութիւնը չէ

կատարելագործուել՝ անպատճառ պէտք է առանձին ուշադրութիւն դարձուի այդ հարցի վրայ: Մասնաւորացնելով աչք հարցը Կովկասի համար, պէտք է աւելացնենք, որ մեր երկրի, մասնաւոր լեռնային մասի բնակիչներն, որտեղ բարքարօտ տեղերում ղեռ գործում է նահապետական գութանը խզնուկ ափսոսներ փորելով, միակ ու զլխաւոր նեցուկն է, և ղեռ երկար կարող է լինել, տնային արհեստը:

Այլ հարց է թէ օգնութեան և ժամանակի ազդեցութեան տակ տնայնագործութիւնը ինչ կերպարանք կ'ընդունի, ամենայն դէպս ինչ ձև էլ ընդունի, կարող է որոշ նիւթական օգուտ տալ զիւղացուն, չը խօսելով բարոյականի մասին: Այսպէս Սարատովի, Մոսկուայ, Տուլայի և այլ քրճաններում տնայնագործութիւնն այն աստիճան զարգացել է, որ կապիտալիստները մտցնելով որոշ կազմակերպութիւն, տալով նրանց հում նիւթ, գնում են նրանց գործած կտաւները և մետաքսէ կտորները, զարմանալի չէ միթէ, որ Սարատովի սարպիլնական, որը հեղեղում է ամբողջ Ռուսաստանը, տնայնագործութեան արդիւնք է ի հարկէ: Կապիտալիստիկական հիմունքների վրայ գրուած: Մինչև անգամ՝ Մոսկուայի շուրջը մի քանի գործարաններ փակուել են՝ ձեռնտու համարելով տնայնագործներին տալ պատուէրներ: Այդ տեսակէտից մենք պէտք է ամենայն ուրախութեամբ ողջունենք ամեն մի փորձ և կազմակերպութիւն, որ ուղղուած է տնայնագործների զրութիւնն ուսումնասիրելու և բարելոդելու:

Դառնանք համաժողովին: Նիստը բացուեց զիւղատնտեսական ընկերութեան դաշիճում հակտեմբերի 9-ին, նախագահութեամբ տնայնագործութեան լանձնաժողովի գործադիր-անդամ Պ. Փիրալեանցի, ներկայութեամբ կոմսուհի Ուլարովայի և 60 անդամների, Պ. Նախագահը իւր ճառի մէջ, նկարագրելով Կովկասի երկրաբանական և կլիմաբանական պայմանները և նրանցից առաջացած տնտեսական զանազան դրութիւնները, առանձնապէս շեշտեց, թէ որ աստիճանի կարեւոր և անհրաժեշտ է օգնել մեր տնայնագործներին, որոնց արհեստը զնալով ընկնում է, զրկելով զիւղացուն, մասնաւոր լեռնականին, իւր զլխաւոր, նիւթական աղբիւրների մէկից:

Ճատ հետաքրքիր էր Ի. Մ. Թումանեանցի զեկուցումը. նրա մէջ երևում էր մանրամասն և լուրջ ուսումնասիրութիւն. իշխանուհին նկարագրեց գորգեր գործելու եղանակը, նրանց բոլոր պակասութիւնները և զգարութիւնները և թէ ինչ կատարելագործութիւններ և ինչ միջոցով կապելի է մտընել. ինչպէս երևում էր, չարդելի իշխանուհին թէ գործնականապէս և թէ տեսականապէս կատարելապէս ուսումնասիրել էր իւր զեկուցման նիւթը: Բացի այս բոլորից. իշխանուհին ներկայացրեց ժողովին իւր ուսումնարանի հաշիւը և Թիֆլիսում գորգե-

րի ուսման արան — արհեստանոց հիմնելու մի ծրագիր, որ լաւ էր կազմած: Թէ որքան նպատակայարմար է մի այդպիսի դպրոց Թիֆլիսում հիմնել, այդ մասին գուցէ մի ուրիշ անգամ (սօսենք *), միայն այժմ կասենք, յոր այդպիսի մի արհեստանոցի մեծ կարիք կայ, մանաւանդ եթէ մտադրութիւն լինի զանազան կատարելագործուած գործիքներ մտցնելու ժողովրդի մէջ, Յամենայն դէպս՝ ուրախալի փաստն այն էր, որ մի կին, այն էլ հայ կին, ներկայանում է ժողովին լուրջ զեկուցումով և մշակուած ծրագրով: Մեք ճանաչում ենք երկու կին, որոնք հետաքրքրուել են և լուրջ ուշադրութիւն են դարձրել գորգագործութեան վրայ: զբանցից մինը իշխանուհին է, որ ունի իւր ուսումնարանը, իսկ երկրորդը՝ Տ. Եղ. Սարգսեանն է. մենք այս տարի առիթ՝ ունեցանք ծանօթանալ նրա գործունէութեան հետ այդ ասպարէզում. 1894—95 թ. Բագոււմ, սկզբում իւր մօտ, ապա աղքատանոցում հաւաքում է զաղթական կանանց և ինքն անձամբ սովորեցնում գորգեր և կապելտներ գործել, որոնց տասի չափ գործած կտորները մենք առիթ ունեցանք տեսնել, նրանց մէջ բաւականին լաւերը կան և զարմանալի է, որ քիչ ժամանակուայ մէջ այդ աստիճանի կատարելագործութեան են հասել, Տ. Ե. Սարգսեանը այդ փորձերի հիման վրայ կալմել է մանրամասն ծրագիր—զեկուցում և ներկայացրել Բագուի Մարգարիտական Ընկերութեան՝ մի գորգագործարան հիմնելու համար: Այդ տեսակ փորձնական ուսումնասիրութիւնները շատ զնաճատելի նիւթեր են տնայնագործութիւն ուսումնասիրողների համար, որովհետեւ ժողովուրդը շատ անգամ վախճնալով, կամ տգիտութեան պատճառով սխալ ու սուտ տեղեկութիւններ է հաղորդում:

Մի զեկուցում էլ կարգաց Դադստանի շրջանի ներկայացուցիչ պ. Կոզուբակին, որ նկարագրեց տնայնագործութեան դրութիւնը և արհեստների տեսակները այդ երկրում, բայց ինչպէս երևում է, նա հիմնուած էր աւելի պաշտօնական տեղեկութիւնների վրայ, անձնական դիտողութիւնները սակաւ էին:

Հետեւեալ զեկուցանողներից էր պ. Զկլենիցկիչ՝ Բագուայ Պրուպր-պալատի կառավարիչը, նա ի միջի աչոյց ներկայացրեց մի ուսումնարանի ծրագիր՝ որտեղ պիտի պատրաստուին ոսկերիկներ, արծաթագործներ և փորագրիչներ. պիտի աւանդուի նկարչութիւն և ընդհանուր առարկաներ, ուսումնարանը լինելու է Բագուում և զեկուցանողը յոյս ունի այդ գործը իրագործել ֆինանսների մինիստրի աջակցութեամբ. բայց զրանից, նա առաջարկում էր տնայնագործ — արծաթագործներին և

*) Անետրոնական հիմնարկութիւնները կլանելով մեծ գումարներ, համեմատաբար քիչ օգուտ են տալիս ժողովրդին՝ հեռու լինելով նրանցից:

ոսկի ու՝ արծաթ մատակարարելու գործը չանձնել մի հիմնարկութեան օր. Պրոսպիր—պալատին, որով առաջ առուած կը լինէր այն բազմաթիւ խարդալուծիւններին, որոնց՝ զոհ են գնում տնայնագործները, ստանալով վատ արծաթ ու ոսկի՝ լաւի տեղ։

Բացի սրանցից, զեկուցում կարդացին պ. պ. Զմերլինգ՝ նկարիչների մասին, Իվանով և Սլիբէկով՝ ներկերի մասին, Զաւարեան՝ տնայնագործութիւնը ուսումնասիրելու եղանակների մասին և ուրիշներ։

Չունենալով մեր ձեռքում բոլոր զեկուցումների պատճէնները, մենք առաջած չենք կարող միառմի խօսել դրանց մասին, մօտիկ ապագայում լուս են տեսնելու Ժողովի աշխատանքները, գուցէ այն ժամանակ կարողանանք վերադառնալ դրանց սաայն շոշափուած բազմաթիւ հարցերից կարևորագոյ ները հետևեալներն են 1) Արդեօք ուսումնարանները (գիւղական) կտրող են ուղղակի կերպով օգնել տնայնագործութեան գործին, այսինքն սովորեցնել այդ ճիւղերի վերաբերեալ դանազան առարկաներ։ 2) Արդեօք Թանգարանները, պահեստները, արհեստանոցները կարող են օգուտ տալ։ Արդեօք ցանկալի է գեմատուլչի կազմակերպութիւն մտցնելը։ Ժողովը սկզբունքով դէմ եղաւ գիւղական ուսումնարաններին ծանրաբեռնել կողմնա. կի գործերով, առարկելով, թէ նա առանց այն էլ մեծ նպաստիչ է Ժողովրդի առաջադիմութեան, իսկ միւս երկու առաջարկութիւնները Ժողովը ցանկալի ու անհրաժեշտ համարեց։

Ընդհանրապէս Ժողովները շատ կենդանի անցան, Հինգերորդ օրը նիստը փակելիս պ. Նախագահը շնորհակալութիւն յայտնեց մասնակցողներին։ Եթէ մի պակասութիւն նկատոււմ էր, այդ տնայնագործների բացակայութիւնն էր, որի պատճառը մասամբ նրանց բնակութեան հեռաւորութիւնը և ռուսերէն չգիտնալն էին։

Յամենայն դէպս, մեր կարծիքով, դա մեծ պակասութիւն էր և դրա համար էլ Ժողովը մասամբ կաբլինետային բնաւորութիւն էր կրում, որ շատ քիչ, մինչև անգամ բոլորովին չխօսուեց թէ ինչ մի ջոցներով, կարելի է բուրդ, ներկ և այլ հում նիւթեր մատակարարել տնայնագործներին, նրանց անգործ ձեռքերը շահեցնելու և փող վաստակելու միջոց տալու. որով և կարելի է միևնոյն ժամանակ աւելի հաւատ ներշնչել դէպի ամէն մի նրանց համար բարեշնչատակ ձեռնարկութիւն. մեր կարծիքով դա պէտք էր զլխաւոր տեղը բռներ և նրաց կարիքը ուղումնասիրելուց յետոյ առաջին գործնական բալը լինէր։

Յ. Կարա—Մուրզա